

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°1

2019թ օգոստոսի 29-ին ժամը 12<sup>00</sup> տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2019- 2020 ուստարվա N°1 նիստը:

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. Google classroom էլեկտրոնային կրթության հարթակում կատարվելիք աշխատանքներ մասին
2. 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի դասընթացների առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատում,
3. Ընթացիկ հարցեր:

Նիստը վարեց ամբիոնի վարիչ՝ Է. Կոկանյանը

Ըստ օրակարգի 1-ին հարցը - Google classroom հարթակում կատարվելիք աշխատանքների և 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասընթացների թեմատիկ տրոհումների և առարկայական նկարագրերի հաստատումն է: Է. Կոկանյանը նշեց, որ Google classroom էլեկտրոնային կրթության հարթակում արդեն ստեղծված են 1-ին կիսամյակի բակալավրիատի 1-4-րդ և մագիստրատուրայի 1-2-րդ կուրսերի դասընթացները: Եվ ինչպես յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին, այս տարի ևս պետք է հաստատվեն տվյալ կիսամյակում դասավանդվող դասընթացների թեմատիկ տրոհումները, որպեսզի տեղադրվեն classroom հարթակի համապատասխան դասընթացում: Ուսանողներին դասախոսությունների փաթեթը կարող են տեղադրել ինչպես կիսամյակի սկզբում, այնպես էլ ամենշաբաթյա կամ ամենամսյա գրաֆիկով:

ՈՐՈՇԵՑԻՆ հաստատել 2019-2020 ուս. տարվա 1-ին կիսամյակի դասընթացների թեմատիկ տրոհումները և առարկայական նկարագրերը:

## Ընթացիկ հարցեր

Ընթացիկ հարցերից Է. Կոկանյանը անդրադարձավ մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաներին: Դասախոսներին հանձնարարվեց 2 շաբաթյա ժամկետում ամբիոնի կողմից կազմված ձևաչափով ամբիոն ներկայացնել թեմաները, ըստ բեռնվածքի նշված ուսանողների թվով, հնարավորության դեպքում նաև 1 թեմա ավել:

Ամբիոնի հաջորդ նիստին նախատեսվում է թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների հաստատումը:

Նիստի նախագահ  Է. Կոչանյան

Նիստի քարտուղար  Սիհիթարյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°2

2019թ սեպտեմբերի 20-ին ժամը 12<sup>20</sup> տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2019- 2020 ուստարվա N°2 նիստը:

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. Առկա մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների հաստատման մասին,
2. Պրակտիկային առնչվող հարցերի մասին,
3. Ընթացիկ հարցեր:

### Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:

Ըստ օրակարգի 1-ին հարցը վերաբերում էր մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների հաստատմանը: Ինչպես հայտարարվել էր ամբիոնի նախորդ նիստին /29.08.19, արձ.1/ ըստ սահմանված ձևաչափի պետք է ամբիոն ներկայացվեին մագիստրոսական թեզերը և ավարտական աշխատանքները: Է. Կոկանյանը նշեց, որ թեմաները ներկայացվել են բոլոր ղեկավարների կողմից և գրեթե բոլոր թեմաները ունեն մեթոդական բաղադրիչ և համապատասխանում են թեզերին և ավարտական աշխատանքներին ներկայացվող պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ հաստատել առկա մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաները:

Օրակարգի 2-րդ հարցը առնչվում էր 2019-2020 ուստարվա 1-ին կիսամյակի պրակտիկաների կազմակերպմանն ու անցկացմանը: Ամբիոնի պրակտիկայի պատասխանատու Ն. Բաբաջանյանը ներկայացրեց, որ 1-ին կիսամյակում 6 շաբաթ մանկավարժական պրակտիկա ունեն բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողները, ովքեր իրենց պրակտիկան անցկացնելու են Ա. Շիրակացու ճեմարանում և 3 շաբաթ մանկավարժահետազոտական պրակտիկա ունեն մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողները, որոնց պրակտիկան կազմակերպվելու և անցկացվելու է ՀՊՄՀ-ում ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում: Մագիստրոսները կկցվեն իրենց գիտական ղեկավարների դասընթացներին՝ բակալավրիատի կուրսերում և հնարավորության դեպքում կվարեն դասեր: Բացի դա, ըստ ամբիոնում ընդունված ձևաչափի ուսանողներին հանձնարարվում է պատրաստել առաձին դասընթացների առարկայական նկարագրեր և թեմատիկ տրոհումներ, դրանց հիման վրա կազմում են թղթապանակներ: Պրակտիկայի ավարտին և բակալավրիատի 4-րդ կուրսում և

մագիստրատուրայի 2-րդ կուրսում կազմակերպվում է պրակտիկայի պաշտպանություն, ըստ նախապես սահմանված գրաֆիկի:

Պրակտիկաների համար ևս classroom հարթակում ստեղծվել են առանձին դասընթացներ, որտեղ տեղադրվում են ուսանողների կատարած աշխատանքերը, ընթացիկ հաշվետվությունները և վերջում թղթապանակները:

### Ընթացիկ հարցեր

Ընթացիկ հարցերից է. Կոկանյանը անդրադարձավ դասերի իրականացմանը և լաբորատոր աշխատանքների կատարմանը: Դասերը տեղի են ունենում ըստ դասացուցակի, որը վերահսկվում է ամբիոնի կողմից:

Է. Կոկանյանը նշեց, որ երկու շաբաթվա ընթացքում նույն ձևաչափով ներկայացնեն հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքների և հեռակա մագիստրատուրայի թեզերի թեմաները:

Նիստի նախագահ  Է. Կոկանյան

Նիստի քարտուղար  Սիհիթարյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°3

2019թ հոկտեմբերի 21-ին ժամը 12<sup>20</sup> տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2019- 2020 ուստարվա N°3 նիստը:

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. Հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքների և հեռակա մագիստրատուրայի թեզերի թեմաների հաստատում,
2. Ընթացիկ հարցեր:

### Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:

Օրակարգում ընդգրկված էր 1 հարց` հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքների և հեռակա մագիստրատուրայի թեզերի թեմաների հաստատում: Ինչպես հայտարարվել էր ամբիոնի նախորդ նիստին /20.09.19, արձ.2/ ըստ սահմանված ձևաչափի պետք է ամբիոն ներկայացվեին հեռակա մագիստրատուրոսական թեզերի թեզերը և ավարտական աշխատանքների թեմաները: Է. Կոկանյանը նշեց, որ հեռակա բակալավրիատում ունենք 3 ուսանող ֆիզիկա մասնագիտությունից և 2 ուսանող բնագիտություն մասնագիտությունից, իսկ հեռակա մագիստրատուրայում` 5 ուսանող: Թեմաները ըստ ամբիոնի պահանջած ձևաչափի ներկայացվել են: Ներկայացված թեմաներից բոլորն էլ ունեն մեթոդական բաղադրիչ: Նշվեց, որ ի տարբերություն առկա մագիստրատուրայի հեռակա մագիստրատուրան տևելու է 5 կիսամյակ/2.5 տարի/: Ընդհանուր քննարկումից հետո`

ՈՐՈՇԵՑԻՆ հաստատել հեռակա մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաները:

### Ընթացիկ հարցեր

Ընթացիկ հարցերից Է. Կոկանյանը անդրադարձավ դասերի իրականացմանը և ամբիոնի կողմից իրականացվող դասալսումներին: Նշվեց, որ կազմվել է դասալսման գրաֆիկ, ըստ որի պետք է իրականացնել դասալսումները: Եվ ավելի ընդունելի

կլինեն, որ դասալսումների թերթիկներում պարտադիր նշվեն առաջարկություններ, ինչը հնարավորություն կտա քննարկել և բարելավել դասապրոցեսը:

Է. Կոկանյանը նշեց, որ հոկտեմբերի վերջին շաբաթում նախատեսվում է 1-ին միջանկյալ ստուգումների անցկացումը՝ ըստ ուսումնական պլանների, ուստի պետք է նախապես պատրաստել և ուղարկել գրավոր ստուգումների տարբերակները՝ հաստատման համար:

Նիստի նախագահ՝  Է. Կոկանյան

Նիստի քարտուղար՝  Ս. Մխիթարյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°4

2019թ նոյեմբերի 25-ին ժամը 12<sup>20</sup> տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2019- 2020 ուստարվա N°4 նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. Ամբիոնի հաշվետվության հաստատում,
2. Ընթացիկ հարցեր:

**Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:**

Օրակարգում ընդգրկված էր 1 հարց` ամբիոնի 2019 թվականի հաշվետվության ներկայացումը և հաստատումը: Է. Կոկանյանը ներկայացրեց ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հաշվետվությունը`

### 1. Ամբիոնի ուսումնական գործունեություն

Հաշվետու ուսումնական տարվա համար նախատեսված ուսումնական աշխատանքները կատարվել են ամբողջ ծավալով: Ուսուցման և ուսումնառության բոլոր աշխատանքները կազմակերպվել և իրականացվել են համալսարանի կանոնադրության, գիտխորհրդի, ֆակուլտետի խորհրդի, դեկանատի և ամբիոնի ընդունած որոշումների հիման վրա: Քննարկվել, վերամշակվել և վերահաստատվել են բոլոր առարկաների առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները: Վերամշակվել և վերահաստատվել են ըստ ուսումնական պլանի կատարվող լաբորատոր աշխատանքների բացատրականները:

Ուսումնառության արդյունքները համապատասխանում են առարկայական նկարագրերով սահմանված վերջնարդյունքներին:

Ուսումնառության արդյունքների գնահատումը իրականացվել է ուսումնական պլաններում նշված ստուգման ձևերով և առարկայական նկարագրերով սահմանված գնահատման բաղադրիչների հիման վրա ԲՈՒՀ-ում ընդունված ընդհանուր գնահատման համակարգով: Գնահատումը իրականացնելիս հաշվի են առնվել առարկաների առանձնահատկությունները, լաբորատոր և գործնական դասերը: Գնահատման բաղադրիչների մաս է կազմում նաև classroom էլեկտրոնային հարթակում գնահատվող առաջադրանքները:

Ըստ ուսումնական պլանի կազմակերպվել և անցկացվել բոլոր դասընթացները, ինչպես նաև մանկավարժական և ուսումնական պրակտիկաները: Բոլոր տիպի պրակտիկաներից առաջ կազմակերպվել են կոնֆերանսներ: Ավարտին ուսանողները ներկայացրել են հաշվետվություն և կազմակերպվել են ամփոփիչ կոնֆերանսներ և պրակտիկայի պաշտպանություն ըստ համալսարանի պրակտիկայի վարչության ներկայացրած ձևաչափի: Ամբիոնում առկա են բոլոր պրակտիկաների թղթապանակները:

Ամբիոնում կազմակերպվել և անցկացվել են գիտական սեմինարներ, որոնք վարել են ամբիոնի դասախոսներ և ինչպես նաև հրավիրյալ պրոֆեսորներ: Ըստ կազմված գրաֆիկի անցակցվել են դասալսումներ, լրացվել են դասալսման համապատասխան նմուշի ձևանմուշները և ամբիոնի նիստերին քննարկվել են դասալսումների արդյունքները: Մշտապես ուշադրության կենտրոնում է եղել classroom հարթակում կատարվող աշխատանքները:

### Ամբիոնում սեմինար է անցկացել՝

- ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյան «Աստղագիտության ժամանակակից խնդիրները» թեմայով:
- Ֆրանսիայի Savoie Mont Blanc համալսարանի պրոֆեսոր Յանիկ Մուզնիեր «LN բյուրեղի կիրառությունները տարբեր ոլորտներում»
- ❖ **Հաշվետու տարվա ընթացքում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը տպագրել է 14 հոդված, որից 9 բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում, որոնք ներառված են Scopus և WOS շտեմարանում և 9 թեզիսներ, որոնք գեկուցվել են միջազգային կոնֆերանսներում:**
- ❖ **Ս.թ. սեպտեմբերի 25-ին մանկավարժական համալսարանում տեղի ունեցել ամբիոնի դասախոս Ա. Դանիելյանի թեկնածուական ատենախոսության պաշտպանությունը** Լազերային ֆիզիկա Ա.04.21 մասնագիտությամբ (ֆրանսիական տարբերակ): Պաշտպանության խորհուրդը ձևավորվել էր 3 հայ և 3 ֆրանսիացի անդամներից: Ըստ ֆրանսիական կողմի թեմաների պաշտպանության օրենքների՝ մասնագիտական պաշտպանական խորհրդի կազմում էին 2 համահեղինակ և 2-ական անդամ Հայաստանից և Ֆրանսիայից՝ 2 առաջին ընդդիմախոս և 2 փորձագետ. Յանիկ Մուզնիեր (Ֆրանսիա), Կամո Ահարոնյան (Հայաստան, Պոլիտեխնիկ ինստիտուտ, ՀՊՄՀ հրավիրյալ դասախոս), Նարինե Բաբաջանյան (ՀՊՄՀ դոցենտ) և Նինել Կոկանյան (Լորենի համալսարանի պրոֆեսոր), ինչպես նաև Սերգեյ Կոստրիցկի՝ Մոսկվայից հրավիրյալ անդամ:
- ❖ **Հաշվետու տարվա ընթացքում ամբիոնի թվով 10 աշխատակիցներ մասնակցել են մանկավարժական համալսարանում կազմակերպված ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացներին (ֆիզիկա մասնագիտությունից, 36 ժամ տևողությամբ): Դասընթացների ավարտին ստացել են հավաստագրեր:**
- ❖ **Ամբիոնի դասախոս Ա. Դանիելյանը որպես փորձագետ մասնակցում է ֆիզիկա առարկայի առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման աշխատանքներին: Ծրագիրը կավարտվի 2020 թվականի հունիս 30-ին :**

### 2. Ամբիոնի հետազոտական գործունեությունը:

Հաշվետու տարվա ընթացքում ամբիոնը ունի թվով 14 տպագրություն, որից 9 բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում, որոնք ներառված են Scopus և WOS շտեմարաններում:

### Հաշվետու տարվա ընթացքում`

- **Ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը հունիսի 18-21** ժամանակահատվածում Ֆրանսիայի Գերարդմեր քաղաքում մասնակցել է “PR'19, Photorefractive Photonics and beyond” միջազգային կոնֆերանսին, հանդես է եկել 3 ստենդային զեկույցներով:
- Ամբիոնի 6 աշխատակիցներ մասնակցել են Գիտությունների Ազգային ակադեմիայի ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում տեղի ունեցած “Laser Physics 2019” Միջազգային գիտաժողովին (Աշտարակ, 17-20 Սեպտեմբեր, 2019), հանդես են եկել 1 բանավոր և 3 ստենդային զեկույցներով:
- Ամբիոնի 5 աշխատակիցներ մասնակցել են 7th International Symposium on Optics & its applications (OPTICS-2019) (20 - 24 Սեպտեմբեր, 2019, Երևան) միջազգային գիտաժողովին: Հանդես են եկել 1 բանավոր և 1 ստենդային զեկույցներով:

### 3. Ամբիոն ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները հաշվետու տարում:

- Գիտությունների Ազգային ակադեմիայի ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում տեղի ունեցած “Laser Physics 2019” Միջազգային գիտաժողովին, (Աշտարակ, 17-20 Սեպտեմբեր, 2019) ամբիոնի նախաձեռնությամբ մասնակցել են ֆիզիկա մասնագիտության մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերի և բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողները (առանց զեկույցների):
- Մայիսի 6-8-ը ընկած ժամանակահատվածում մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետում կազմակերպված «Աստղագիտության դասավանդումը դպրոցում» միջազգային ծրագրի շրջանակում կազմակերպված սեմինարներին ակտիվորեն մասնակցել են ֆիզիկա և բնագիտություն մասնագիտությունների բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողները: Մասնակիցները սեմինարներին ավարտին ստացել են հավաստագրեր:
- Ֆիզիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողների Վարդուհի Մկրտչյանը ճանաչվել է ՄՖԻ ֆակուլտետի լավագույն ուսանող:

### 4. Արտաքին կապեր և միջազգային գործունեություն

Ամբիոնը համագործակցում է`

1. ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի,

2. Ֆրանսիայի Լորենի համալսարանի Օպտիկական Նյութերի և Ֆոտոնիկական համակարգերի լաբորատորիայի (LMOPS),
3. Իտալիայի Պադովայի համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի,
4. Ամերիկայի Միացյալ Նահանգների Սան Անտոնիոյի և Բոզեմանի համալսարանների ֆիզիկայի ֆակուլտետների հետ:

**Հաշվետու տարվա ընթացքում համատեղ հետազոտությունների շրջանակներում տպագրվել են 9** հոդվածներ, որոնց մեծ մասը բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում, որոնք ներառված են Scopus և WOS շտեմարաններում:

Համագործակցության շրջանակում ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը հունիս-հուլիս ամիսներին գործուղման է մեկնել ֆրանսիայի Լորենի համալսարան, հանդես է եկել զեկույցներով:

Քվանտային էլեկտրոնիկայի և ինտեգրալային օպտիկայի նոր նյութերի լաբորատորիայի կողմից ստացված արդյունքները զեկույցվել են՝ “Laser Physics 2019” , “7th International Symposium on Optics & it's Applications (OPTICS 2019)” և “PR'19, Photorefractive Photonics and beyond” միջազգային գիտաժողովներում:

## **5. Մասնագիտական կողմնորոշման և մարքեթինգային գործունեություն**

Հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ կապերի ձևավորման նպատակով ամբիոնում ամեն տարի կազմվում է դպրոցների այցելության ժամանակացույց և ըստ ժամանակացույցի ամբիոնի աշխատակիցները այցելում են և՛ մարզային, և՛ քաղաքային դպրոցներ:

2019թ. նոյեմբերի 22-ին Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետում անցկացվել է օլիմպիադա «Ֆիզիկա» առարկայից ավագ դպրոցի աշակերտների համար: Օլիմպիադայի կազմակերպան և անցկացման աշխատանքներին ակտիվ մասնակցություն է ունեցել ամբիոնի դասախոս Ա. Եգանյանը:

## **6. Որակի ապահովում**

Ամբիոնի գործունեությունը մեծապես ուղղված է ուսուցման որակի բարձրացմանը: Որակի ապահովմանն ուղղված աշխատանքներից են՝

- SS տեխնոլոգիաների կիրառումը դասապրոցեսում
- հազեցած լաբորատորիաների առկայությունը
- classroom էլեկտրոնային հարթակը
- ամբիոնում կազմակերպվող և իրականացվող սեմինարները
- փոխադարձ դասալսումները

Բաց քվեարկության արդյունքում՝

ՈՐՈՇԵՑԻՆ հաստատել ամբիոնի 2019 թվականի հաշվետվությունը:

Նիստի նախագահ  Է. Կուկանյան

Նիստի քարտուղար  Ս. Միխիթարյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N<sup>05</sup>

2020թ հունվարի 20-ին ժամը 12<sup>20</sup> տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2019- 2020 ուստարվա N<sup>05</sup> նիստը:

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. Google classroom էլեկտրոնային կրթության հարթակում կատարվելիք աշխատանքների մասին
2. 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի դասընթացների առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատում,
3. Ընթացիկ հարցեր:

Ըստ օրակարգի 1-ին հարցը - Google classroom հարթակում կատարվելիք աշխատանքների և 2019-2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակի դասընթացների թեմատիկ տրոհումների և առարկայական նկարագրերի հաստատումն է: Է. Կոկանյանը նշեց, որ Google classroom էլեկտրոնային կրթության հարթակում արդեն ստեղծված են 2-րդ կիսամյակի բակալավրիատի 1-4-րդ և մագիստրատուրայի 1-2-րդ կուրսերի դասընթացները: Ըստ կարգի յուրաքանչյուր կիսամյակի սկզբում պետք է հաստատվեն դասընթացների առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները, որպեսզի տեղադրվեն classroom հարթակի համապատասխան դասընթացում: Ինչպես առաջին կիսամյակում որոշվել էր ուսանողներին դասախոսությունների փաթեթը կարող են տեղադրել ինչպես կիսամյակի սկզբում, այնպես էլ ամենշաբաթյա կամ ամենամսյա գրաֆիկով:

ՈՐՈՇԵՑԻՆ հաստատել 2019-2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակի դասընթացների թեմատիկ տրոհումները և առարկայական նկարագրերը:

### Ընթացիկ հարցեր

Ընթացիկ հարցերից Է.Կոկանյանը անդրադարձավ մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքին: Հանձնարարվեց 2 շաբաթյա ժամկետում

ներկայացնել հաշվետվությունների ուսանողների կատարած աշխատանքերի մասին: Հաջորդ  
նիստով նախատեսել մագիստրոսների ատեստավորումը:

Նիստի նախագահ  Է. Գուկասյան

Նիստի քարտուղար  Ս. Միհրթարյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°6

2020թ փետրվարի 20-ին ժամը 12<sup>20</sup> տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2019- 2020 ուստարվա N°6 նիստը:

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. 2020-2021 ուստարվա ընդունելության մասին,
2. Google classroom էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների մասին,
3. 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակի դասալսումների մասին,
4. Մագիստրոսների ատեստավորման մասին
5. Ընթացիկ հարցեր:

### Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:

Ըստ օրակարգի 1-ին հարցը վերաբերում էր 2020-2021 ուստարվա ընդունելությանը: Է. Կոկանյանը նշեց, որ հաշվի առնելով հարցի կարևորությունը մշտապես անդրադարձել են ամբիոնի նիստերի և տարվել են աշխատանքներ այդ ուղղությամբ: Դեռ կիսամյակի սկզբում կազմակերպվում և անցկացվում են այցելություններ դպրոցներ, իհարկե մեծամասամբ շեշտը դնելով մարզային դպրոցների վրա, հաշվի առնելով մասնագետների դեֆիցիտը հատկապես մարզերում: Ցանկալի է, որ դասախոսները հենց դասախոսությունների ժամանակ ևս ներկայացնեն ֆիզիկայի կարևորությունը, որպեսզի 2-րդ կուրսից ուսանողները չփոխեն իրենց բաժինները: Պետք է ուսանողներին տեղեկացնել 2-րդ մասնագիտության հնարավորության մասին, դա հնարավորություն կտա պահպանել մասնագիտությունը նաև ստանալ 2-րդ մասնագիտություն:

Է. Կոկանյանը նշեց, որ Google classroom հարթակում տարվող աշխատանքները մշտապես վերահսկվում են ամբիոնի կողմից, ամբիոնի մասնագետ Ն. Մխիթարյանը ամեն ամիս մշտադիտարկում է անցկացնում հարթակում և պարբերաբար հաշվետվություններ են ներկայացվում Կրթության էլեկտրոնային կառավարման /ԿԷԿ/ բաժին: Այնուհանդերձ որոշ դասընթացներում առկա են թերություններ, հորդորեց առկա թերությունները շտկել կարճ ժամանակահատվածում:

Մյուս հարցով անդրադարձան մագիստրոսների ատեստավորմանը: Ինչպես նշվել էր ամբիոնի նախորդ նիստին պետք է ներկայացվեին հաշվետվություններ թեզերի կատարման ընթացքի մասին: Հիմք ընդունելով ներկայացված հաշվետվությունները`

ՈՐՈՇԵՑԻՆ ատեստավորել առկա մագիստրատուրա 1-ին, 2-րդ և հեռակա մագիստրատուրա 1-ին կուրսի մագիստրոսներին:

Նիստի նախագահ՝  Է. Կոկանյան

Նիստի քարտուղար՝  Ս. Սիմոնյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°7

2020թ մարտի 20-ին ժամը 17<sup>00</sup> տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2019- 2020 ուստարվա N°7 առցանց նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. Հեռավար ուսուցման կազմակերպման մասին
2. Ընթացիկ հարցեր:

**Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:**

Օրակարգի միակ հարցը վերաբերում էր հեռավար ուսուցման կազմակերպման մասին՝ պայմանավորված Covid 19-ի համաճարակով: Է. Կոկանյանը հայտնեց, որ համաճարակի տարածումը կանխելու համար ըստ ռեկտորի հրամանի դասերը հետայսու կազմակերպվելու են հեռավար՝ Google classroom հարթակի միջոցով: Է. Կոկանյանը նշեց, որ Կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի կողմից կազմակերպվելու են առցանց հանդիպումներ դասերի առցանց կազմակերպման և իրականացման մասին, ինչպես նաև ուղարկվելու են ուղեցույցեր:

Է. Կոկանյանը հավելեց նաև, որ դասերի առցանց կազմակերպումը և իրականացումը պետք է որ խնդիրներ չառաջացնի քանի որ ՀՊՄՀ-ում արդեն 4 տարի կիրառվում է Google classroom հարթակը, հարթակի google meet գործիքի կիրառմամբ կազմակերպվելու են դասերը:

Հանձնարարվեց ամբիոնի մասնագետ Ն. Մխիթարյանին առցանց հանդիպում կազմակերպել դասախոսների հետ և մանրամասն երկայացնել Google meet հավելվածը և հնարավորությունները: Պայմանավորվածություն ձեռք բերվեց հանդիպել 1 շաբաթ անց և քննարկել առկա խնդիրները:

Նիստի նախագահ՝  Է. Կոկանյան

Նիստի քարտուղար՝  Ն. Մխիթարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°8

2020թ մարտի 25-ին ժամը 17<sup>00</sup> տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2019- 2020 ուստարվա N°8 անցանց նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. Հեռավար ուսուցման կազմակերպման մասին
2. Ընթացիկ հարցեր:

**Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:**

Է. Կոկանյանը նշեց նախորդ նիստին /20.03.20 թ., արձ 7/ դասերի հեռավար անցկացման մասին Կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի կողմից կազմակերպվել և անցկացվել են տեսահանդիպումներ: ԿԷԿ բաժնի կողմից կազմակերպվել են ամենօրյա տեսահանդիպումների գրաֆիկ, ամբիոնի մասնագետ Ն. Մխիթարյանը մասնկացում է այդ հանդիպումներին և անհրաժեշտ ինֆորմացիան կփոխանցի ամբիոնի մյուս աշխատակիցներին:

Նշվեց, որ հնարավոր տեխնիկական խնդիրների առկայության դեպքում պարտադիր տեղեկացնել ամբիոն, որպեսզի դասերը տեղափոխվեն և գրառումներ կատարվեն դասացուցակի ֆայլերում:

Ցանկալի է դասերի ընթացքում նաև արվեն նկարներ /screenshots/ և տեղադրվեն համապատասխան դասընթացներում, որոնք ևս կփաստեն դասերի իրականացումը:

Քանի որ ըստ ուսումնական պլանների որոշ դասընթացներ ունեն նաև լաբորատոր աշխատանքներ, առաջարկվեց լաբորատոր աշխատանքները ևս հնարավորության սահմաններում իրականացնել առցանց` օգտվելով համացանցում առկա վիրտուալ լաբորատորիաներից:

Նիստի նախագահ  Է. Կոկանյան

Նիստի քարտուղար  Ն. Մխիթարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°9

2020թ ապրիլի 1-ին ժամը 17<sup>00</sup> տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2019- 2020 ուստարվա N°9 առցանց նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. Հեռավար ուսուցման կազմակերպման մասին
2. Ընթացիկ հարցեր:

**Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:**

Է. Կոկանյանը նշեց որ արդեն 2 շաբաթ է ամբողջությամբ ուսուցումը կազմակերպվում է առցանց: Եվ՝ դասախոսական կազմը, և՛ ուսանողները հաջողությամբ կարողանում են օգտվել Google meet հավելվածից, Կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի և ամբիոնի կողմից վերահսկվում է ամբողջ պրոցեսը:

Ամբիոնի պրակտիկայի պատասխանատու Ն. Բաբաջանյանը նշեց, որ հեռակա բակալավրիատի 4-րդ կուրսի պրակտիկան ըստ պրակտիկայի բաժնի որոշման կիրականացվի 2021-2020 ուստարվա 1-ին կիսամյակում, իսկ մյուս պարկտիկանները առկայում ինչպես նախատեսված է ուսպլանով կկազմակերպվեն առցանց սահմանված ժամկետներում:

Նիստի նախագահ

Է. Կոկանյան

Նիստի քարտուղար

Ն. Մխիթարյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°10

2020թ ապրիլի 28-ին ժամը 16<sup>00</sup> տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2019- 2020 ուստարվա N°10 անցանց նիստը:

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. Ավարտական ամփոփիչ քննությունների առցանց կազմակերպման մասին,
2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների առցանց կազմակերպման մասին,
3. Ընթացիկ հարցեր:

### Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:

Ըստ օրակարգի առաջին հարցը վերաբերում էր ավարտական ամփոփիչ քննությունների առցանց կազմակերպմանը: Է. Կոկանյանը նշեց, որ ելնելով երկրում տիրող համաճարակային իրավիճակից, պայմանավորված վարակակիրների մեծ թվերով, ուսումնական գործընթացը շարունակում է կազմակերպվել և իրականացվել առցանց: ԲՈՒՀ-ի որոշմամբ կիսամյակային քննությունները ևս կազմակերպվելու են առցանց: Քննությունների առցանց կազմակերպման և անցկացման մասին Կրթության էլեկտրոնային կառավարման բաժին կազմել և ուղարկել է ուղեցույցներ ինչպես նաև տեսահոլովակներ, որոնք արդեն ուղարկվել են դասախոսներին: Քննության ամբողջ ընթացքը պետք է տեսաձայնագրվի՝ google meet հավելվածը ունի նաև այդ գործառույթը:

Երկրորդ հարցը վերաբերում էր ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների առցանց կազմակերպման մասին: Է. Կոկանյանը նշեց, որ մագիստրոսական թեզերի /մայիսի 14/ և ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների /մայիսի 13/ համար ստեղծվել է առանձին դասընթացներ:

Համաձայն ԲՈՒՀ-ի որոշման 2019-2020 ուստարում բակալավրիատի և մագիստրատուրայի ամփոփիչ որակավորման քննությունները ևս կազմակերպվելու և անցկացվելու են առձյանց: Հանձնաժողովի անդամների համար ստեղծվել են առանձին aspu էլեկտրոնային հասցեներ, պատրաստվել է առանձին տեսահոլովակ ուղեցույցներ քննությունների կազմակերպման և անցկացման մասին: Է. Կոկանյանը նշեց, որ ամբիոնը իր հերթին ևս կնախաձեռնի մի քանի առցանց հանդիպում հանձնաժողովի անդամների հետ քննության կազմակերպչական հարցերի վերաբերյալ:

Է. Կոկանյանը հավելեց նաև, որ պայմանավորված համաճարակային իրավիճակով ուսումնական շաբաթներում տեղի է ունեցել փոփոխություն, մարտ ամսին հայտարարված կարանտինային իրավիճակի

պայմաններում բաց թողնված 2 ուսումնական շաբաթները կլրացվեն մայիս ամսին և ըստ այդմ որակավորման ամփոփիչ քննությունները կիրականացվեն հունիսի 10-25-ը ընկած ժամանակահատվածում:

Նիստի նախագահ՝  Է. Կոկանյան

Նիստի քարտուղար՝  Ս. Միխարյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°11

2020թ Հունիսի 6-ին ժամը 15<sup>00</sup> տեղի ունեցավ ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2019- 2020 ուստարվա N°11 անցանց նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

1. 2020-2021 ուստարվա ընդունելության մասին,
2. Ընթացիկ հարցեր:

### **Նիստը վարեց ամբիոնի վարիչ Է. Կոկանյանը:**

Ըստ օրակարգի առաջին հարցը վերաբերում էր ավարտական ամփոփիչ քննությունների առցանց կազմակերպմանը: Է. Կոկանյանը նշեց, որ ելնելով երկրում տիրող համաճարակային իրավիճակից, պայմանավորված վարակակիրների մեծ թվերով, ուսումնական գործընթացը շարունակում է կազմակերպվել և իրականացվել առցանց: ԲՈՒՀ-ի որոշմամբ կիսամյակային քննությունները ևս կազմակերպվելու են առցանց: Քննությունների առցանց կազմակերպման և անցկացման մասին Կրթության էլեկտրոնային կառավարման բաժին կազմել և ուղարկել է ուղեցույցներ ինչպես նաև տեսահոլովակներ, որոնք արդեն ուղարկվել են դասախոսներին: Քննության ամբողջ ընթացքը պետք է տեսաձայնագրվի, google meet հավելվածը ունի նաև այդ գործառույթը:

Երկրորդ հարցը վերաբերում էր ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների առցանց կազմակերպման մասին: Է. Կոկանյանը նշեց, որ մագիստրոսական թեզերի /մայիսի 14/ և ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների /մայիսի 13/ համար classroom հաթակում ստեղծվել էին առանձին դասընթացներ: Հաշվի առնելով նախապաշտպանությունները որոշեցին՝ ՈՐՈՇԵՑԻՆ ատեստավորել բնագիտություն մասնագիտության 1 և ֆիզիկա մասնագիտության 7 ուսանողներին և երաշխավորել պաշտպանության:

ՈՐՈՇԵՑԻՆ չատեստավորել ֆիզիկա առկա բաժնի 2 ուսանողի՝ Վարդանյան Արա, Արշակյան Սուսան.

Հաշվի առնելով հեռակա մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողների հաշվետվությունները՝

ՈՐՈՇԵՑԻՆ ատեստավորել հեռակա մագիստրատուրա բաժնի 5 ուսանողներին:

ՈՐՈՇԵՑԻՆ ատեստավորել ֆիզիկա մասնագիտության առկա բակալավրիատի 4-րդ կուրսի 7 ուսանողի և երաշխավորել պաշտպանության:

ՈՐՈՇԵՑԻՆ ատեստավորել ֆիզիկա մասնագիտության հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի 4 ուսանողի և Բնագիտություն մասնագիտության 5-րդ կուրսի 2 ուսանողներին և երաշխավորել պաշտպանության:

Նիստի նախագահ՝  Է. Կոկանյան

Նիստի քարտուղար՝  Ն. Մխիթարյան